

Յարութիւն Արքեպ. Պրուսա գնաց եւ հոն մնաց մինչեւ 1759, Սամուէլ Եպ. Երզնկացւոյ Առաջնորդութեան ժամանակ: Այս մասին հետեւեալը կը գրէ Վանքեան Արիստ. Եպ. (« Բիւզանդիոն », 1906, թ. 3127). « Յարութիւն Վ. Բասենցի. (1756—1759) կամ իբր նուիրակ կամ իբր առաջնորդ Պրուսա գտնուած է: Պրուսայի Հայոց մէջ երկպառակութիւն եւ կրօնական վէճեր առաջ գալու պատճառ կ'ըլլայ դէպ ի Հռոմէականութիւն միտում ցոյց տալով: Իրեն հետ Պրուսա գտնուած է Սարաֆեան Սարգիս Վ., որ յետոյ առաջնորդ եղած է Կեսարիոյ եւ Գաղատիոյ եւ հուսկ ուրեմն Հռոմէականութիւնն ընդունած է: Պրուսայի մէջ ասկէ առջի սերունդին պատկանող ծերունիներէն շատեր նողկանօք կը յիշէին Բարսենցի Յարութիւն Վ. մը, որ Պրուսայի Հայերն երկպառակած է կրօնական խնդիրներով: Լեզուական աղաւաղում մ'է անշուշտ Բարսենցի կոչումն որ Բասենցին ըլլալ ցոյց կու տայ: Այս Բասենցին թոքատի նուիրակ ալ եղած է, եւ քանիցս Կ. Պոլսոյ մէջ եկեղեցական գործոց խառնուած: Ի վերջոյ 1751ին Էջմիածինը ձգելով գացած է Թրիեսթէ, Միսիթարեանց վանքն ապաստանած է Հռովմէականութիւնն ընդունելով: Մեռած է 1756ին 101 տարեկան եւ թաղուած է ի Թրիեսթէ: Հաւանական է որ Բասենցի աւելի նուիրակի հանգամանքով Պրուսա գտնուած ըլլայ. վասն զի ոմանք Սամուէլ Երզնկացին 1756ին պաշտօնի մտած կը կարծեն: Յայտնի է որ Սարգիս Արքեպ. ի